Հովհաննես Թումանյան

Շատերի նման նա էլ խեղդվեցավ...

Շատերի նման նա էլ խեղդվեցավ.
Փոքրոգությունն եք պարսավում նրա:
Լռեցե՛ք, եղբայր, ի՞նչ գիտեք, ի՛նչ ցավ
Առաջնորդեց այն մարդուն դեպի մահ:

Տեսե՛ք, այս խեղճը տխուր, գլխակոր,
Մոլոր շրջում է սգվորի նման.
Բայց նրա մասին մի՛ դատեք, երբ որ
Չգիտեք ինչն է կորացրել նրան:

Ահա, վարում են մյուսին պատժարան.

Օ՜, մի՛ անվանեք նրան չարագործ:
Ի՞նչ գիտեք, գուցե մի միտք երկնարժան
Այս օրին մատնեց այդ մարդուն անփորձ:

Եվ դուք ի՞նչ գիտեք, թե երգիչն ուրախ,
Որ ձեզ համար միշտ երգեր է երգում,

Քարասիրտ մարդկանց ծաղրանքից ծածկած
Ի՛նչ ցավեր ունի յուր սրտի խորքում: